

ՄԻ ԼԱՐ, ՄԱՐԻԿ

ՄԱՐԻԱՄ ՄԵՆԱՍՅԱՆ

♩ = 50

5 Մի Լար տա - րիկ մի' Լար ես կե - նե պի
 գամ. աս - կե տաս - նը - հինգ օ - րե՛ն. մա - րիկ.
 փե - սա - յով պի գամ: Քե - զի կը - սիմ.
 աղ - ջի Մա - րիամ. խե - լոք պի կե - նաս. մոր - մեդ
 ու պա - պա - յեդ. աղ - ջի. կա - թոտ պի մը - նաս:

Մի' Լար, մարիկ, մի' Լար,
 ես կենե պի գամ.
 Ասկե տասընհինգ օրեն, մարիկ,
 Փեսայով պի գամ:

5 Քեզի կըսիմ, աղջի' Մարիամ,
 Խելոք պի կենաս,
 Մորմեդ ու պապայեդ, աղջի',
 Կարոտ պի մնաս:

Դըգալըս կոյրեցեք, մարի'կ,
 10 Բախճան նետեցեք,

- 2 կենե—նորից, դարձյալ, թրք. եինե բառը պետք է լինի, բայց այս և ուրիշ մի շարք բարբառների մեջ միայն կինե կամ կենե է գործածվում:
 9 Կոյրեցեք—կոտրեցեք. բարբառային փոփոխություն, հրբեմն կոյրել, երբեմն էլ կոյցել ձևերով:
 10 Բախճա—բաղչա, պարտեղ:

Իմ ունեցած լաթերս, մարի'կ,
Աղքատին տրվեք:

(Չենգիլեր, Մարիամ Մինասյան)

11 լաթ—այստեղ հագուստ իմաստով: Ընդհանրապես ներքնազգեստներն է ակնարկ-
վում, ինչպես լաթ լվալ, լաթ ընել, լվացք անել իմաստով: լաթ նշանակում է նաև
որևէ կտոր, ինչպես փոշու լաթ, գլխի լաթ և այլն: